ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2018-2-1-Ա

ք. Երևան 28.02.2018թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2018 թվականի փոտրվարի 28-ի նիստում քննարկեց 2018 թվականի հունվարի 16-ին արտոնագրային հավատարմատար Ալլա Հախնազարյանի կողմից ներկայացված՝ Rigo Trading S.A. Société Anonyme (Route de Trèves 6 EBBC, Building E L-2633 Sennigerberg) ընկերության բողոքը (IR1277892) պատկերային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված պատկերային ապրանքային նշանը չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 30-րդ դասի ապրանքների համար միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող ((Haribo Holding GmbH & Co. KG Hans-Riegel-Strasse 1 53129 Bonn (DE)) IR 1050956, 27.07.2010) պատկերային ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 127-րդ կետի համաձայն համեմատվող նշանները նման են արտաքին տեսքով՝ երկու նշաններում էլ պատկերված է նույնանման ոճավորված արջուկը: Չնայած հայտարկված ապրանքային նշանը ներկայացված է գունային համակցությամբ ի տարբերություն հակադրված ապրանքային նշանի, այնուամենայնիվ տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի մոտ կարող է պատկերացում առաջանալ մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որի հետ

ինքն արդեն առնչվել է: Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված կրկնական փորձաքննություն խնդրարկելու մասին դիմումի մեջ նշված այն փաստին, որ IR 1050956 միջազգային գրանցում ունեցող ապրանքային նշանի իրավատեր Հարիբո Հոլդինգ Գմբհ & Քո. ԿԳ ընկերությունը վերը նշված ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները փոխանցել է Ռիգո Թրեյդինգ Ս.Ա. ընկերությանը, հայտնում ենք որ, Միջազգային բյուրոն մերժել է Հարիբո Հոլդինգ Գմբհ & Քո. ԿԳ ընկերության կողմից ներկայացված վերոհիշյալ ապրանքային նշանի իրավատիրոջ փոփոխության խնդրարկումը:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանի վկայագիր տալու մասին, քանի որ հակադրված նշանի իրավատիրոջ կողմից ներկայացված է նամակ համաձայնագիր մերժված ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ:

Փորձաքննության բաժնի փորձագետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և (IR1277892) պատկերային ապրանքային նշանի վկայագիր տալ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ